

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. առողջապահական համակարգ, պետական ծախսեր, կորոնավիրուս, համավարակ, անվտանգություն, հասանելիություն, կանխարգելում

Վերջին ժամանակներս ՀՀ-ում ընդունվել են դեղագործական ոլորտը կարգավորող բազմաթիվ օրենսդրական ակտեր: Հոդվածի շրջանակում անդրադարձ է կատարվում դեղերի զուգահեռ ներմուծման թույլտվության հեղինակներով առաջ եկող ռիսկերին ու հնարավորություններին: Դեղերի զուգահեռ ներմուծումը կապված է իրավունքների սպառման սկզբունքների հետ: Ընդ որում, Եվրասիական տնտեսական միության տարածքում ամրագրված է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման տարածաշրջանային սկզբունքը: Դեղերի զուգահեռ ներմուծում իրականացվում է նաև Եվրամիությունում՝ ազատ տեղաշարժի ստանդարտացված պայմաններին և գների կարգավորման ու համալիր բժշկական ապահովագրության համակարգերի պահանջներին համապատասխան: Զուգահեռ ներմուծման կողմնակիցների կարծիքով՝ դեղորայքի ներմուծման այլընտրանքային տարբերակների օրինականացումը բարենպաստ կերպով է անդրադառնում մրցակցության զարգացման, տեսականու ընդլայնման և գների իջեցման վրա: Սակայն, ՀՀ դեղագործական շուկայում ներկայումս ստեղծված իրավիճակը վկայում է նոր ռիսկերի և սպառնալիքների առաջացման մասին, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ են կարգավորման լրացուցիչ կառուցակարգեր:

Տնտեսական զարգացման ներկա փուլում ձեռնարկատիրական գործունեության բոլոր ձևերը բախվում են նոր իրողությունների: Դեղագործական ոլորտը բացառություն չէ: Բնակչությանը մտահոգում են



Սուսաննա ԱՂԱՋԱՆՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2003 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2007 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան և աշխատանքի անցել ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում՝ որպես ասիստենտ: Հեղինակ է 12 գիտական աշխատանքների:

դեղորայքի ձեռքբերման աճող ծախսերը: Զարգացած երկրների բնակչությունը սեփական միջոցներով քիչ է «խառնվում» դեղորայքի ձեռքբերմանը, իսկ դրա ընտրությունն էլ հեշտությամբ կարգավորվում է կորպորացիաների մարկետինգային գործիքների շնորհիվ: Այս պարագայում գնալով ավելի է մեծանում առողջապահության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության դերը՝ ռեֆերենս գների, զեղչերի, պայմանագրերի, զուգահեռ ներմուծման կառուցակարգերի կիրառմամբ:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ զգալի հետաքրքրություն է առաջացել դեղամիջոցների և բժշկական պարագաների առևտրի նկատմամբ: Պետությունները կիրառում են տարբեր միջոցառումներ առաջին անհրաժեշտության բժշկական պարագաների առևտրային հոսքերը կարգավորելու ուղղությամբ:

Համաշխարհային դեղագործական շուկայի զարգացումը պայմանավորված է մասնավորապես՝ ոլորտում կատարվող ներդրումների զգալի տեսակարար կշռով, ինչպես նաև շուկայի հետագա աճի կայուն կանխատեսումներով: Ըստ այդ կանխատեսումների՝ առաջիկայում աճելու են ուռուցքաբանության, ԶԻԱՀ-ի, շաքարախտի, ռևմատիկ հիվանդությունների դեղամիջոցների արտադրման ծավալները¹:

Ըստ փորձագետների՝ 2018 թ. դեղամիջոցների համաշխարհային շուկայի ծավալը կազմել է 1.174 մլրդ ԱՄՆ դոլար, որտեղ ԵԱՏՄ մասնաբաժինը մոտ 2.6% է: Մինչև 2021 թ. կանխատեսվում է այս շուկայի տարեկան աճ՝ 5%-ի սահմաններում՝ պայմանավորված ԳՀՓԿԱ ծախսերի աճով՝ դրանց արդյունավետության միաժամանակյա նվազմամբ, պետական կարգավորման խստացմամբ, շուկայի տարբեր հատվածներում մեծացող մրցակցության պայմաններում գների անկմամբ և այլ գործոն-

ներով:

2018 թ. ԵԱՏՄ երկրներում արտադրվել է 9243 մլն ԱՄՆ դոլարի դեղագործական արտադրանք, որից Հայաստանին բաժին է ընկնում 0.2%, Բելառուսին՝ 6.5%, Ղազախստանին՝ 2.4%, Ղրղզստանին՝ 0.04%, Ռուսաստանին՝ 90.8%: Ընդ որում, այս ցուցանիշը 2017 թ. համեմատ աճել է 13%-ով, իսկ 2014 թ. համեմատ՝ 36%-ով:

ՀՀ դեղագործական շուկայի մեծապես կախված է ներմուծումից: Այստեղ շրջանառվող դեղորայքի անվանումներից միայն 14%-ն է արտադրվում երկրի ներսում, իսկ 20%-ը ներմուծվում է ԵԱՏՄ անդամ երկրներից, 66%-ը՝ այլ երկրներից²:

Վերջին ժամանակներս ՀՀ-ում ընդունվել են ոլորտը կարգավորող բազմաթիվ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Համաձայն 2016 թ. ընդունված «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ տարածք դեղերի ներմուծման/արտահանման կարգի³ սահմանվում են ոլորտի հիմնական պահանջները: Այս օրենսդրական փաթեթում առկա են բազմաթիվ խոցելի դրույթներ, որոնցից այս հոդվածի շրջանակում կներկայացնենք դեղերի զուգահեռ ներմուծումը թույլատրելու արդյունքում առաջացած ռիսկերն ու հնարավորությունները:

Զուգահեռ ներմուծումը բազմակողմանի երևույթ է, որի կարգավորումը պահանջում է սպառողների, հեղինակային իրավունքի կրողների, ներդրողների, դիստրիբյուտորների, պետական կարգավորման մարմինների հետաքրքրությունների համակցում: Դա երկրի տարածք բնօրինակ դեղորայքի ներմուծումն է՝ առանց ապրանքային նշանի իրավատիրոջ հետ օրինական համաձայնության, զուգահեռ, այլընտրանքային ուղիներով: Սա նշանակում է, որ տվյալ երկրի տարածք դեղորայք է ներմուծվում ոչ թե պաշտոնական դիստրիբյուտորական ցանցերի կամ ներկայա-

¹ The Global Use of Medicine in 2019 and Outlook to 2023 Forecasts and Areas to Watch. Iqvia Institute for Human Data Science. January 2019.

² http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_prom/SiteAssets/Analiz_pharma_2018_express.pdf

³ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու կարգ»:

ցուցչությունների միջոցով, այլ այդ ցանցերից դուրս, հաճախ՝ զուգահեռ:

Զուգահեռ ներմուծումը կապված է ապրանքային նշանի իրավատիրոջ բացառիկ իրավունքների սպառման հետևյալ սկզբունքների հետ՝ միջազգային, ազգային, տարածաշրջանային: Իրավունքների սպառման միջազգային սկզբունքը ենթադրում է, որ իրավատերը, սպառելով իր ապրանքը որևէ երկրում, չի խառնվում նոր սեփականատիրոջ հետագա գործողություններին: Իրավունքների բացառիկ սպառման ազգային կամ տարածաշրջանային սկզբունքի կիրառման պարագայում ապրանքային նշանի իրավատերը, ապրանք արտահանելով որևէ երկիր կամ տարածաշրջան, չի թույլատրում այդ ապրանքի ներմուծում երրորդ երկրից:

Եվրասիական տնտեսական միության տարածքում, ըստ 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի, ամրագրված է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման տարածաշրջանային սկզբունքը: Ըստ այդմ՝ ԵԱՏՄ որևէ անդամ երկրում գրանցված դեղորայքը կարող է ազատորեն շրջանառվել անդամ մյուս երկրներում:

Վերոնշյալ սկզբունքն ամրագրված է նաև Եվրամիությունում՝ ստանալով պետական աջակցություն նույնիսկ գիտահետազոտական մեծ ներուժ ունեցող երկրներում: Միաժամանակ, զուգահեռ ներմուծում է իրականացվում Եվրամիությունում՝ ապրանքների ազատ տեղաշարժի ստանդարտացված պայմաններին և գների կարգավորման ու համալիր բժշկական ապահովագրության համակարգերի պահանջներին համապատասխան: Զուգահեռ ներմուծողների գերմանական ասոցիացիայի մատնանշած տվյալների համաձայն՝ գների ճշգրտման հաշվին տարեկան անուղղակի տնտեսվում է 2.6 մլրդ եվրո, իսկ ուղղակի տնտեսումները Եվրամիությունում տարեկան 264 մլն եվրո են⁴:

Զուգահեռ ներմուծման կողմնակիցների կարծիքով՝ դեղորայքի ներմուծման այլ-

ընտրանքային տարբերակների օրինականացումը բարենպաստ կերպով է անդրադառնում մրցակցության զարգացման, տեսականու ընդլայնման և գների իջեցման վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ դեղագործական շուկային, ապա այստեղ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման սկզբունքի փոփոխության նպատակահարմարության ու «զուգահեռ ներմուծման» օրինականացման հնարավորության հարցերը բավական վաղուց են քննարկվում: «Դեղերի մասին» նոր օրենքում սահմանվում են դեղերի զուգահեռ ներմուծման կարգն ու առանձնահատկությունները: Այլ կերպ ասած, ՀՀ տարածք է ներմուծվում դեղորայք, որը մակնշված է օրինական ապրանքային նշանով, բայց տվյալ երկրի տարածք ներմուծվել է առանց իրավատիրոջ թույլտվության:

Փորձենք պարզել, թե ինչպես է այս երևույթն անդրադառնում ոչ միայն ՀՀ դեղագործական շուկայի, այլև վերջնական սպառողների վրա, և արդյո՞ք ակնկալվող գնի իջեցումը միայն դրական երևույթ է:

Դեղորայքը մարդու կյանքի և առողջության հետ կապված ամենակարևոր միջոցներից է, ուստի վերջնական սպառողի համար էական է կիրառվող դեղորայքի որակը: Այս առումով, դիստրիբյուտորների կողմից դեղագործական արտադրանքի ներմուծումը կեղծիքներից ապահովագրվելու որոշակի երաշխիքներ է ապահովում:

Զուգահեռ ներմուծման դեպքում, անկախ այն հանգամանքից, որ դեղորայքը շուկայում իրացվում է վերափաթեթավորման կամ պարզեցված կրկնակի գրանցման սխեմայով, բաց օղակների թիվն աճում է: Քիչ կարգավորվող շուկաներում խնդիրն ավելի լուրջ է, քանի որ դեղորայքի զուգահեռ առևտրի պարագայում ռիսկերը կարող են ճակատագրական լինել:

Հետևաբար, առաջին հերթին, ներմուծվող դեղորայքի իսկությունը պարզելու համար անհրաժեշտ է մշակել արդյունավետ

⁴ Отчет о научно-исследовательской работе «Влияние ограничения параллельного импорта на товарные рынки российской федерации» (заключительный). По договору на выполнение работ № 5 от «10» июня 2013 г. фонд «центр стратегических разработок», М., 2013.

կառուցակարգ, քանի որ երբ ներմուծողը զուգահեռ աղբյուրներից ձեռք է բերում դեղորայք, դա չի վկայում, վերջինիս օրինական ապրանք լինելու մասին: Իհարկե, ուսումնասիրելով դիստրիբյուտորների գործունեությունը և իրավակիրառման փորձը, ակնհայտ է դառնում, որ մի քանի օղակներից ներմուծման դեպքում առաջանում են թույլ օղակների բացահայտման խնդիրներ, ինչը բացատրվում է ինչպես կազմակերպչական, այնպես էլ իրավական պատճառներով:

Եթե դեղորայքը ներմուծվում է վերափաթեթավորում պահանջող մոդելով, ապա պետք է նվազագույնի հասցնել նման արտադրական գործընթացների հետևանքով առաջացած ռիսկերը: Միաժամանակ, վերափաթեթավորումը, առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության, բացառիկ իրավունքի ակնհայտ խախտում է, քանզի իրավատերն ինքն է որոշում, թե ապրանքն ինչ տեսքով պետք է ներկայացվի շուկայում: Այս տեսանկյունից, վերամակնշումն առավել արդյունավետ տարբերակ է:

Տարածաշրջանային մաքսային միության պայմաններում, երբ բացակայում է մաքսային հսկողությունը, մեծանում են տնտեսության ստվերային հատվածը և զուգահեռ ներմուծման նոր ուղիների քանակը, հետևաբար՝ կեղծ դեղորայքի ներմուծման և տարածման հավանականությունը:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում դեղերի զուգահեռ ներմուծմամբ զբաղվող ընկերությունները հեշտությամբ, առանց որևէ խոչընդոտի, դեղորայք են ներմուծում ԵԱՏՄ երկրներից՝ ստանալով դրոշմապիտակ և իրացնելով ապրանքը համապատասխան շուկայում: Արդյունքում, շրջանառության շղթայում է միայն պարզվում, որ այդ դեղորայքի խմբաքանակները չեն գրանցվել և չեն ստացել իրացման թույլտվություն: Այս դեպքում հարց է առաջանում՝ ինչ հիմքով է այդ ընկերություններին դրոշմապիտակ

տրամադրվում⁵:

Ջուգահեռ ներմուծմանն առնչվող հաջորդ կարևորագույն փաստարկն անկախ ներմուծողների կողմից մոխրագույն սխեմաների կիրառումն է: Դա նշանակում է, որ շատ հաճախ ներմուծված ապրանքների ծավալի և մաքսային արժեքների թերիայտարարագրման հետևանքով պետությունը չի հավաքագրում հարկեր լրիվ ծավալով: Հաճախ «մոխրագույն» ներմուծումն ուղեկցվում է հարկային և մաքսային օրենսդրության խախտումներով, իսկ զուգահեռ ներկրման դեպքում խախտվում է նաև ապրանքային նշանի օգտագործման կարգը: Իհարկե, զուգահեռ և «մոխրագույն» ներմուծումները նույնական գործընթացներ չեն, բայց գործնականում դրանք ուղեկցում են միմյանց:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ պետք է ասել, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի «զուգահեռ ներմուծման» դրույթի գործարկումը պահանջում է հսկողական միջոցառումների, իրավական կառուցակարգերի կատարելագործում:

Ինչ վերաբերում է դեղորայքի գների սահմանմանը, ապա այստեղ պետք է հաշվի առնել գնային տարբերությունների մակարդակը, դրանց հիմնավորվածությունն ու գնի իջեցման հնարավորությունը զուգահեռ ներմուծման օրինականացման դեպքում: Եթե նույնիսկ գների միջև գոյություն ունի զգալի տարբերություն, չի կարելի աներկբայորեն պնդել, որ զուգահեռ ներմուծման օրինականացումը հանգեցնում է գների կտրուկ իջեցման: Այստեղ հարցը վերաբերում է շուկայում գների ճշգրտմանը: Գների ճշգրտման սպասումները բխում են նրանից, որ, զուգահեռ ներմուծման ծավալների ավելացման հետ մեկտեղ, պաշտոնական ներկայացուցչությունները սկսում են ավելի ակտիվորեն արձագանքել գների խզմանը:

Ջուգահեռ ներմուծման կողմնակիցները կարծում են, որ պաշտոնական դիստրիբյուտորները հաճախ անհիմն ձևով բարձ-

⁵ Դրոշմապիտակը սահմանված չափեր, ձև և կեղծումից պաշտպանվածության աստիճան ունեցող ինքնատանձվող դրոշմանիշ է, որի վրա նշված ապրանքի համառոտ անվանումը, սերիան և հերթական համարը հնարավորություն են տալիս նույնականացնելու դրանով դրոշմավորված ապրանք արտադրողին կամ ներմուծողին:

րացնում են դեղորայքի գները, մինչդեռ զուգահեռ ներմուծումը հարթում է գների տարբերությունները՝ կիրառելով շուկայական կառուցակարգեր:

Հիմնվելով մի քանի դրույթների վրա՝ ընդհանրացնենք դեղերի զուգահեռ ներմուծման գործընթացի ազդեցությունը.

- Դեղերի զուգահեռ ներմուծումը շատ հաճախ չի ուղեկցվում դրանց պահպանման և փոխադրման կանոնների կիրառմամբ, ինչը, իր հերթին, հանգեցնում է որակի անկման: Դեղի արդյունավետության անկման պարագայում ապրանքային նշանի իրավատերը կորցնում է լոյալ (հավատարիմ) գնորդներին:

- Դեղերի զուգահեռ ներմուծման ոչ մեծ ծավալը չի առաջացնում զգալի գնային փոփոխություններ շուկայում: Այսպես՝ զուգահեռ օղակներից ներկրված «Միգ» դեղամիջոցի մեծածախ գինը 700-750 դրամ է, իսկ պաշտոնական դիստրիբյուտորական ցանցերը դա վաճառում են 1050-1200 դրամով: Այստեղ, թերևս, կարևոր է այն հանգամանքը, թե ինչ գնով են մանրածախ վաճառքով զբաղվող դեղատները դեղորայք վաճառում վերջնական սպառողներին:

- Առաջանում է «անտոմս ուղևորի» հիմնախնդիր, երբ իրավատերը կրում է ներկայացուցչական և մարքեթինգային ծախսերը, իսկ զուգահեռ ներմուծողն օգտվում է արդյունքներից:

- Զուգահեռ ներմուծումը նվազեցնում է պաշտոնական ներկայացուցչությունների շահույթը, որն արտացոլվում է ընկերությունների եկամուտների վրա, հետևաբար նաև՝ զուգահեռ ներմուծման պարագայում ակնկալվող կարճաժամկետ գների իջեցումը, ըստ էության, առաջացնում է բազմաթիվ տնտեսական և սոցիալական հետևանքներ: Առավել լուրջ վտանգը բխում է ոչ թե հենց զուգահեռ ներմուծումից, այլ դրանից բխող գործողություններից: Այս ամենի հետևանքով իրավատերերը կորցնում են շուկայի մի մասը, ստիպված հրաժարվում են իրենց շահույթի որոշակի հատվածից՝ սահմանափակելով իրենց ներդրումային ծրագրերը, պայքար տանելով կեղծ ապրանքների դեմ, իսկ սպառողը, հաճախ առանց իմանալու, գնում է պակաս որակյալ ապ-

րանք:

Մինչ աշխարհը պայքարում է COVID-19-ի դեմ, հանցագործներն այն վերածել են կեղծ գործունեության հնարավորության: Համավարակն ուժեղացրեց կեղծ դեղագործական ապրանքների վաճառքի հետ կապված ռիսկերը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն, կորոնավիրուսի հետ կապված, աճել է կեղծ դեղամիջոցների ծավալը զարգացող երկրներում, ինչն արձանագրել է նաև Ինտերպոլը: Մասնավորապես՝ Ինտերպոլի դեղագործական հանցագործությունների դեմ պայքարի ստորաբաժանումը ընդամենը յոթ օրվա ընթացքում 121 ձերբակալություն է իրականացրել 90 երկրներում, ինչի արդյունքում առգրավվել է ավելի քան 14 միլիոն ԱՄՆ դոլարի կեղծ դեղորայք:

Կորոնավիրուսի համավարակը վկայեց դեղերի զուգահեռ ներմուծման թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը: Երևույթը դրական էր այնքանով, որ այլընտրանքային զուգահեռ օղակներից դեղամիջոցների և պարագաների ներմուծումը թույլ տվեց կանխել դեղագործական շուկայում ապրանքների պակասուրդը, ներմուծման ծավալների աստիճանական ընդլայնման պայմաններում տեղի ունեցավ առաջին անհրաժեշտության դեղորայքի գնանկում: Այս երևույթի բացասական դրսևորումներից դարձավ այն, որ տարբեր անօրինական ճանապարհներով շուկան լցվեց բազմաթիվ ապրանքներով, որոնք շատ դեպքերում չունեն համապատասխանության հավաստագրեր, անհայտ են դրանց ծագման աղբյուրները և այլն:

Ընդհանուր առմամբ, ՀՀ դեղագործական շուկայի մասնակիցները կարծում են, որ նոր կառուցակարգերի գործարկումը, մասնավորապես՝ դեղերի զուգահեռ ներմուծման թույլատրումը, դեղամիջոցների նկատմամբ պատշաճ դիստրիբյուտորական պրակտիկայի կանոնների կիրառումը (GDP), ԵԱՏՄ ընդհանուր դեղագործական շուկայի ձևավորումը, դեղերի գների պետական կարգավորման գործընթացները նոր ռիսկեր ու սպառնալիքներ են առաջացնում շուկայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Դեղերի մասին» ՀՀ օրենք, մայիսի 17, 2016 թ.:
2. «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու կարգ», ՀՀ կառավարության 202-Ն/ 28.02.2019 թ. որոշում:
3. Влияние ограничения параллельного импорта на товарные рынки российской федерации (заключительный). Отчёт о научно-исследовательской работе. По договору на выполнение работ №5 от «10» июня 2013 г ФОНД «Центр стратегических разработок», М., 2013.
4. Легализация параллельного импорта и ее влияние на товарные рынки России: аналитический отчет, отв. ред. сер. В. В. Радаев, «Высшая школа экономики». М., НИУ ВШЭ, 2011.
5. Мамедьяров З.А., Инновационное развитие мировой фармацевтической отрасли, М., ИМЭМО РАН, 2019.
6. Нургалеев М.С., Петров Е.Н., Параллельный импорт лекарственных средств – особенности правового регулирования параллельного импорта в Европейском Союзе, Вопросы российского и международного права. 2019. Том 9, № 2, с. 279-286.
7. The Global Use of Medicine in 2019 and Outlook to 2023 Forecasts and Areas to Watch. Iqvia Institute for Human Data Science. January 2019.
8. http://www.eurasiancommission.org/ru/act/prom_i_agroprom/dep_prom/SiteAssets/Analiz_pharma_2018_express.pdf

Сусанна АГАДЖАНЫН

Кандидат экономических наук, АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ПАРАЛЛЕЛЬНЫЙ ИМПОРТ ЛЕКАРСТВЕННЫХ СРЕДСТВ В АРМЕНИИ

В последнее время в Республике Армения были приняты многочисленные законодательные акты, регулирующие фармацевтическую отрасль. В этой статье представлены риски и возможности, возникающие в результате параллельного импорта лекарственных средств. Параллельный импорт связан с принципами использования прав, при этом в Евразийском экономическом союзе закреплён региональный принцип исключительного использования товарного знака. Параллельный импорт лекарств также осуществляется в Европейском союзе в соответствии со стандартизированными условиями свободного передвижения, с требованиями регулирования цен и комплексных систем медицинского страхования. Сторонники параллельного импорта утверждают, что легализация параллельного импорта лекарств оказывает положительное влияние на развитие конкуренции, расширение ассортимента и снижение цен. Однако текущая ситуация на армянском фармацевтическом рынке свидетельствует о том, что на рынке появляются новые риски и угрозы, которые необходимо устранять с помощью дополнительных механизмов регулирования.

Ключевые слова: *лекарственные средства, цены, фармацевтический рынок, принципы исчерпания прав*

Susanna AGHAJANYAN

PhD in Economics, ASUE

ARMENIA AND WORLD

PARALLEL IMPORT OF DRUGS IN ARMENIA

Recently, the Republic of Armenia has adopted numerous laws regulating the pharmaceutical industry. This paper presents the risks and opportunities arising from the parallel import of drugs. Parallel import is linked to the principles of rights exhaustion. The Eurasian Economic Union enshrines the regional principle of the exclusive use of a trademark. In the European Union, parallel import of drugs is performed in compliance with standard conditions of goods free movement, with the requirements of price regulation and integrated health insurance systems. Parallel import supporters argue that the legalization of parallel import of drugs has the potential to influence competition, expand assortment and reduce prices. The current situation of the Armenian pharmaceutical market indicates that new risks and threats appear on the market that need to be addressed with the help of additional regulatory mechanisms.

Keywords: *drugs, prices, pharmaceutical market, principles of rights exhaustion*